ՈՐՈՇՈՒՄ

Հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և դատական նիստ նշանակելու մասին

1 փետրվարի 2023թ. ք.Երևան
Քաղաքացիական գործ՝ ԵԴ/3024/02/23

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Մ.Հովակիմյանս ծանոթանալով «Զաքարյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության տնօրեն Սամվել Զաքարյանի կողմից ներկայացված հայցադիմումին և կից փաստաթղթերին.

ՊԱՐԶԵՑԻ

«Զաքարյան Շին» ՍՊ ընկերության տնօրեն Սամվել Զաքարյանը 2023թ. հունվարի 25-ին հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Շին» ՍՊ ընկերության միջև 2022թ. նոյեմբերի 30-ին կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/169 ծածկագրով գնման պայմանագիրը Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի կողմից միակողմանի լուծելու մասին թիվ 29/Ն/45481-22 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, որը դատավորի աշխատակազմին է փոխանցվել 2023թ. հունվարի 27-ին:

Ուսումնասիրելով հայցադիմումը և կից փաստաթղթերը՝ գտնում եմ, որ այն ենթակա է ընդունման վարույթ:

Միաժամանակ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հայցադիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը կայացնում է որոշում՝ պատասխանողից տվյալ գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները պահանջելու մասին, գտնում եմ, որ անհրաժեշտ է պատասխանողից պահանջել թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/169 ընթացակարգի ծածկագրով գնման գործընթացի հետ կապված պատասխանողի տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Բացի այդ, նկատի ունենալով, որ հայցվորը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի հիմքով խնդրել է գործը քննել բանավոր ընթացակարգով (որի համաձայն՝ դատարանը սույն գլխով նախատեսված վեճերով գործերը քննում և դրանց վերաբերյալ վճիռները և որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ դատարանը գործին մասնակցող անձի միջնորդությամբ կամ իր նախաձեռնությամբ եկել է եզրահանգման, որ անհրաժեշտ է գործը քննել դատական նիստում)՝ գտնում եմ, որ անհրաժեշտ է տվյալ քաղաքացիական գործը քննել դատական նիստում:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 125-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 234.6-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով և 234.9-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Զաքարյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հայցն ընդդեմ Երևանի քաղաքապետարանի՝ Երևանի քաղաքապետարանի և «Զաքարյան Շին» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2022թ. նոյեմբերի 30-ին կնքված ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/169 ծածկագրով գնման պայմանագիրը Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի ղեկավար Ռոման Համբարձումյանի կողմից միակողմանի

լուծելու մասին թիվ 29/Ն/45481-22 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին ընդունել վարույթ:

Պահանջել պատասխանող Երևանի քաղաքապետարանին՝ տվյալ որոշումը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում դատարան ներկայացնել թիվ ԵՔ-ԳՀԱՇՁԲ-22/169 ընթացակարգի ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:

Թիվ ԵԴ/3024/02/23 քաղաքացիական գործը քննել դատական նիստում՝ այն նշանակելով 2023թ. մարտի 9-ին՝ ժամը 11:00-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի Արաբկիր նստավայրում (հասցե՝ ք.Երևան, Հր.Ներսիսյան 10, դատական նիստերի դահլիճ թիվ 5):

Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

ԴԱՏԱՎՈՐ Մ.ՀՈՎԱԿԻՄՅԱՆ